ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 մայիսի 2012թվականի N 138-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական տարածքում գործող անհատ ձեռնարկատեր Անուշ Դավթյանը և <<Գոլդ Խազա>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հայտ են ներկայացրել քաղաքապետարան՝ իրենց սեփական ձեռնարկատիրական օբյեկտներում ոգելից խմիչքներ և ծխախոտի արտադրանք վաճառելու թույլտվություն ստանալու համար:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ սահմանված կարգը և ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի գ) ենթակետի , «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Բավարարել հայտը և տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանք վաճառելու թույլտվություն 01 հունվարի 2012թ-ից մինչև 31 դեկտեմբերի 2012թ. ժամանակահատվածի համար
-Անուշ Դավթյան անհատ ձեռնարկատեր

2. Բավարարել հայտը և տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանք վաճառելու թույլտվություն 01 մայիսի 2012թ-ից մինչև 31 դեկտեմբերի 2012թ. ժամանակահատվածի համար
-«Գոլդ Խազա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

3. Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնին. տուրքի գանձումները կատարել յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշմամբ հաստատված դրույքաչափերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 02
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2012թվականի N 139-Ա

ՔԱՂ. ԱՇՈՏ ՍԱԼԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ, ԴԻԼԻՋԱՆԻ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 54/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԵՆԶԱԼՑԱԿԱՅԱՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն թիվ 10042012-11-0010 սեփականության իրավունքի վկայագրի՝ Դիլիջանի Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 54/2 հասցեի 162.0քմ հողամասը պատկանում է քաղ. Աշոտ Սենիկի Սալազարյանին: Նշված հողամասում առկա է ինքնակամ կառուցված բենզալցակայանի շենք-շինություններ: Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Աշոտ Սալազարյանը՝ նշված ինքնակամ շինություններն օրինականացնելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ համաձայն պետականորեն լիցենզավորված անձի կողմից կազմված հատակագծի՝ Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 54/2 հասցեի 162.0քմ հողամասում ինքնակամ կառուցված է բենզալցակայանի շենք-շինություններ, մասնավորապես, տաղավար՝ 5.6քմ մակերեսով, վառելիքի հոր՝ 44.9քմ մակերեսով, ծածկ՝ 12.9քմ մակերեսով և պարիսպ՝ 7.6քմ մակերեսով:
Հանձնաժողովը նշում է, որ նշված ինքնակամ շինությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված օրինականացման պայմաններին, չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված են առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների: Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, վերոգրյալ ինքնակամ շինությունների օրինականացման վերաբերյալ: Վերոգրյալ ինքնակամ կառուցված 71.0քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների օրինականացման համար օրենքով նախատեսված վճարի չափը կազմում է 1086300 /մեկ միլիոն ութսունվեց հազար երեք հարյուր/ դրամ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 54/2 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 5.6քմ մակերեսով տաղավարը, 44.9քմ մակերեսով վառելիքի հորը, 12.9քմ մակերեսով ծածկը և 7.6քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:
2. Պարտավորեցնել քաղ. Աշոտ Սալազարյանին.
1) սույն որոշումը կայացնելու պահից 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած/ քաղաքապետարանի 900405051690 հաշվարկային հաշվին մուծել վերոգրյալ ինքնակամ կառուցված բենզալցակայանի շենք-շինությունների օրինականացման դիմաց գանձվող օրենքով սահմանված վճարը, այն է՝ 1086300 /մեկ միլիոն ութսունվեց հազար երեք հարյուր/ դրամ, վերջինիս վճարման անդորրագիրը սույն որոշման անբաժանելի մասն է:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 04
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2012թվականի N 140-Ա

ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 114/1 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2012թ. ապրիլի 27-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Դիլիջանի Հակոբջանյան փողոցի թիվ 114/1 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք են բերել քաղ. Անգին Արշալույսի Աղաջանյանը և Արման Օնիկի Աղաջանյանը: Վերջիններս դիմել են քաղաքապետարան նշված տնամերձ հողամասի սահմանների ճշտման և հողամասին կից, իր կողմից փաստացի ավել օգտագործվող հողամասն օտարելու խնդրանքով:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովի ուսումնասիրություններից պարզվել է, որ Հակոբջանյան փողոցի թիվ 114/1 հասցեի բնակելի տան տնամերձ հողամասի փաստացի չափը կազմում է 1105.0 քմ, որից 400.0քմ հողամասի նկատմամբ քաղ. Անգին Աղաջանյանը և Արման Աղաջանյանը ունեն սեփականության իրավունք: Հանձնաժողովն առաջարկություն է ներկայացրել քաղաքապետին՝ փաստացի ավել օգտագործվող 705.0քմ-ից 80.0քմ-ի (400.0քմ X 20%) նկատմամբ ճանաչել քաղ. Անգին Աղաջանյանի և Արման Աղաջանյանի սեփականության իրավունքը, իսկ 625.0քմ (705.0քմ-80.0քմ) /բաղկացած երկու զույգային միավորից. 200.0քմ և 425.0քմ/ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարել քաղ. Աղաջանյաններին: Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ բնակելի կառուցապատման, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75 հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման շրջանակներում Դիլիջանի Հակոբջանյան փողոցի թիվ 114/1 հասցեի 400.0քմ տնամերձ հողամասին կից փաստացի ավել օգտագործվող 1105.0քմ հողամասից 80.0քմ հողամասի նկատմամբ ճանաչել քաղ. Անգին Արշալույսի Աղաջանյանի և Արման Օնիկի Աղաջանյանի սեփականության իրավունքը, իսկ 625.0քմ հողամասն/բաղկացած երկու զույգային միավորից. 200.0քմ և 425.0քմ/ օտարել քաղ. Անգին և Արման Աղաջանյաններին՝ ուղղակի վաճառքի ձևով: Օտարվող հողամասի արժեքը կազմում է 232875 դրամ:
2. 425.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե. Ք. Դիլիջան, Հակոբջանյան փողոց թիվ 114/3:
3. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
4. Պարտավորեցնել քաղ. Անգին Աղաջանյանին և Արման Աղաջանյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել հողի արժեքը՝ 232875 դրամ /հաշվարկված է հողամասի կադաստրային արժեքի 30%-ի չափով/, վերջինիս մուծման անդորրագիրը սույն որոշման անբաժանելի մասն է:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 04
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2012թվականի N 141-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՎԱՍԻԼԵՎ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Յուրիկ Բագրատի Դավթյանը՝ Վասիլև փողոցի թիվ 4 հասցեի տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասի օրինական չափը 400.0քմ է: Վերջինիս կից փաստացի ավել օգտագործվում է 1130.0քմ հողամաս, որից 300.0քմ հողամասի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղ. Յուրիկ Դավթյանը ձեռք է բերում սեփականության իրավունք: Մնացած 830.0քմ հողամասը, որտեղ առկա են ինքնակամ կառուցված 46.5քմ և 23.7քմ մակերեսներով օժանդակ շինություններ, ենթակա է վերադարձման համայնքի տնօրինության տակ /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառուցումներ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:
Նշված 300.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Այսպիսով, Վասիլև փողոցի թիվ 4 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի չափը կազմում է 700.0քմ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Դիլիջանի Վասիլև փողոցի թիվ 4 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 700.0քմ մակերեսով, քաղ. Յուրիկ

Բագրատի Դավթյանի /ծնված՝ 10.09.1938թ./ սեփականության իրավունքով:
2. Վասիլև փողոցի թիվ 4 հասցեի տնամերձ հողամասի կազմում փաստացի ավել օգտագործվող 830.0քմ հողամասը օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջանի քաղաքային համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում և 46.5քմ և 23.7քմ մակերեսներով օժանդակ շինություններն ընդգրկել Դիլիջանի քաղաքային համայնքի գույքացանկում:
3. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումները համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
4. Պարտավորեցնել քաղ. Յուրիկ Դավթյանին.
1) Իր տնամերձ հողամասի սահմանները համապատասխանեցնել հողամասի հաստատված հատակագծին:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ.մայիսի 04
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2012թվականի N 142-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2010Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 891 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի փոփոխումն Դիլիջանի համայնքի ղեկավարի 2010թ. հոկտեմբերի 27-ի "ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 196 ԵՎ ԹԻՎ 196/2 ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ" թիվ 891 որոշման և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի ղեկավարի 2010թ. հոկտեմբերի 27-ի թիվ 891 որոշման վերնագրում կատարել փոփոխություն, մասնավորապես՝ "Կալինինի փողոցի թիվ 196" հասցեն փոխարինել "Կալինինի փողոց թիվ 196/3" հասցեով և "Կալինինի փողոց թիվ 196/2" հասցեն փոխարինել "Կալինինի փողոց թիվ 196/4" հասցեով:
2. Դիլիջանի համայնքի ղեկավարի 2010թ. հոկտեմբերի 27-ի թիվ 891 որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Վերոգրյալ 126.0քմ մակերեսով հողամասին տրամադրել նոր հասցե՝ Կալինինի փողոց թիվ 196/3, և 497.0քմ մակերեսով հողամասին տրամադրել նոր հասցե՝ Կալինինի փողոց թիվ 196/4»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 04
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2012թվականի N 143-Ա

ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 25Բ ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2006թ. հուլիսի 4-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Դիլիջանի Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 25բ հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել քաղ. Արմեն Լևոնի Գրիգորյանը: Վերջինս դիմել է քաղաքապետարան նշված տնամերձ հողամասի սահմանների ճշտման և հողամասին կից, իր կողմից փաստացի ավել օգտագործվող հողամասն իրեն օտարելու խնդրանքով:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովի ուսումնասիրություններից պարզվել է, որ Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 25բ հասցեի բնակելի տան տնամերձ հողամասի փաստացի չափը կազմում է 1305.0 քմ, որից 500.0քմ հողամասի նկատմամբ քաղ. Արմեն Գրիգորյանն ունի սեփականության իրավունք: Հանձնաժողովն առաջարկություն է ներկայացրել քաղաքապետին՝ փաստացի ավել օգտագործվող 805.0քմ-ից 100.0քմ-ի (500.0քմ X 20%) նկատմամբ ճանաչել քաղ. Արմեն Գրիգորյանի սեփականության իրավունքը, իսկ 705.0քմ (805.0քմ-100.0քմ) հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարել քաղաքացուն: Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառուցումներ և ինքնակամ կառուցված օժանդակ շինություն, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:
Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով.առաջադրված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ բնակելի կառուցապատման, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավական ակտերի մասին» օրենքի 75 հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. մարտի 2-ի «ԴԻԼԻՋԱՆԻ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 25/2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 55 որոշումը չեղյալ ճանաչել: Որոշմանը կից տրամադրված հողամասի գլխավոր հատակագիծը համարել անվավեր:
2. Առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման շրջանակներում Դիլիջանի Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 25բ հասցեի 500.0քմ տնամերձ հողամասին կից փաստացի ավել օգտագործվող 805.0քմ հողամասից 100.0քմ հողամասի նկատմամբ ճանաչել քաղ. Արմեն Գրիգորյանի սեփականության իրավունքը, իսկ 705.0քմ հողամասն օտարել քաղաքացուն՝ ուղղակի վաճառքի ձևով: Օտարվող հողամասի արժեքը կազմում է 262683 դրամ:
3. Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 25բ հասցեի բնակելի տանը և 1305.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Մաքսիմ Գորկու փողոց թիվ 25/2:
4. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումները և ինքնակամ կառուցված օժանդակ շինությունը համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
5. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
6. Պարտավորեցնել քաղ. Արմեն Գրիգորյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել հողի արժեքը՝ 262683 դրամ /հաշվարկված է հողամասի կադաստրային արժեքի 30%-ի չափով/, վերջինիս մուծման անդորրագիրը սույն որոշման անբաժանելի մասն է:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 04
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2012թվականի N 144-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 243/17 ՀԱՍՑԵԻ 20.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂ. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Արմեն Նորիկի Հակոբյանը՝ Կալինինի փողոցի թիվ 243/17 հասցեի 20.0քմ հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Կալինինի փողոցի թիվ 243/17 հասցեի 20.0քմ հողամասը, ըստ հողի նպատակային նշանակության, գտնվում է համայնքի «Բնակավայրերի հողերի» կազմում: Նշված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցված է /սեփականության վկայական 03052012-11-0030/:
Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, Կալինինի փողոցի թիվ 243/17 հասցեի 20.0քմ հողամասը, կառուցապատման իրավունքով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Արմեն Հակոբյանին:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. ապրիլի 27-ի թիվ 844-Ն որոշման, Դիլիջանի համայնքի ավագանու 2009թ. ապրիլի 28-ի թիվ 72-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Կալինինի փողոցի թիվ 243/17 հասցեի 20.0քմ հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով, տարեկան 20000 դրամ վճարի չափով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Արմեն Հակոբյանին:
2. Քաղաքացու հետ կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման: Երկամսյա ժամկետում պետական գրանցում չկատարելու դեպքում սույն որոշումը չեղյալ է ճանաչվում:
3. Տրամադրվող հողամասի կառուցապատման նպատակով, քաղաքացուն տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանք:
4. Պարտավորեցնել քաղ. Արմեն Հակոբյանին.

1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) Ավտոտնակի կառուցման նախագծային փաստաթղթերը կազմել Դիլիջանի համայնքի ղեկավարի կողմից հաստատված ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջներին համապատասխան և սահմանված ժամկետում:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ.մայիսի 04
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2012թվականի N 145-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ՊՈՒՃՈՒՐ ԴԻԼԻ» ՀԱՆԴԱՄԱՍԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 8000.0ՔՄ ԽՈՏՀԱՐՔԸ ՔԱՂ. ՄԵԼՍԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Մելսիկ Միքայելյանը, Դիլիջանի «Պուճուր Դիլի» հանդամասի գյուղատնտեսական նշանակության հողերից 8000.0քմ հողամասը որպես խոտհարք՝օգտագործելու իրավունք ստանալու խնդրանքով:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1477-Ն որոշման պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի «Պուճուր Դիլի» հանդամասի 8000.0քմ մակերեսով խոտհարքից 3 տարի ժամկետով օգտվելու իրավունք տրամադրել քաղ. Մելսիկ Միքայելյանին /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
2. Խոտհարքից օգտվելու տարեկան վճարի չափը սահմանել 8000դրամ:
3. Քաղաքացու հետ կնքել խոտհարքից օգտվելու պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1477-Ն որոշմամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 04
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2012թվականի N 146-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2013թ. բյուջեի մշակման գործընթացը ծրագրավորված և կանոնակարգված կազմակերպելու նպատակով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հանձնարարել ֆինանսական բաժնի պետ Գ.Դավթյանին
- կազմել Դիլիջան համայնքի 2013թ. բյուջեի նախագծի կազմման օրացույց
- մշակել անհրաժեշտ մեթոդական ցուցումներ,բյուջետային ձևեր և տրամադրել աշխատակազմի անդամներին և բյուջետային հիմնարկների ղեկավարներին
- որոշել ակնկալվող եկամուտների աղբյուրները և ծավալները, ձևավորել նախատեսվող ծախսերի հիմնական ուղղությունները:

2. Հանձնարարել աշխատակազմի ստորաբաժանումների և բյուջետային հիմնարկների ղեկավարներին, համաձայն 2013թ. բյուջեի նախագծի կազմման օրացույցի ֆինանսական բաժին ներկայացնել.
- 2013թ. բյուջետային ֆինանսավորման հայտերը կից հաշվարկներով
- 2013թ. աշխատանքային ծրագրերը և առաջարկությունները՝ համապատասխան հիմնավորումներով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 04
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 մայիսի 2012թվականի N 147-Ա

ՔԱՂ. ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ, ԴԻԼԻՋԱՆԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 6/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Արմեն Զավենի Մարտիրոսյանը՝ Այգեստան փողոցի թիվ 43 հասցեի տնամերձ հողամասին հարակից տարածքում, իր կողմից կառուցված բնակելի տան և վերջինիս սպասարկման հողամասի իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով: Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Այգեստան փողոցի թիվ 43 հասցեի տնամերձ հողամասին հարակից տարածքում քաղ. Արմեն Մարտիրոսյանի կողմից կառուցվել է բնակելի տուն դեռևս 1990-ական թվականներին /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/, որի շինարարության թույլտվության, ինչպես նաև զբաղեցրած հողամասի հատկացման փաստաթղթային հիմքերը պահպանված չեն: Նշված բնակելի տան տվյալները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը փաստացի զբաղեցնում է 400.0քմ հողամաս, որի նկատմամբ քաղաքացին ձեռք է բերում սեփականության իրավունք Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Արմեն Զավենի Մարտիրոսյանի կողմից, Այգեստան փողոցի թիվ 43 հասցեի տնամերձ հողամասին հարակից տարածքում կառուցված բնակելի տանը և 400.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Այգեստան փողոց թիվ 6/1:
2. Այգեստան փողոցի թիվ 6/1 հասցեի բնակելի տունը և 400.0քմ հողամասը համարել քաղ. Արմեն Զավենի Մարտիրոսյանի /ծնված 26.05.1965թ./ սեփականությունը:
3. Պարտավորեցնել քաղ. Արմեն Մարտիրոսյանին.

1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 08
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 մայիսի 2012թվականի N 148-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՇԱՄԱԽՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 20 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին են դիմել քաղաքացիներ Անիչկա, Կամո և Լուսյա Ասլանյանները՝ իրենց սեփականությունը հանդիսացող, Դիլիջանի Շամախյան փողոցի թիվ 20 հասցեի 2370.0քմ հողամասից առանձնացվող 1000.0քմ հողամասին նոր հասցե տրամադրելու խնդրանքով: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Անիչկա, Կամո և Լուսյա Ասլանյաններին պատկանող, Շամախյան փողոցի թիվ 20 հասցեի 2370.0քմ հողամասից առանձնացվող 1000.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Շամախյան փողոց թիվ 20/1, մնացած 1370.0քմ հողամասը թողնել նախկին՝ Շամախյան փողոց թիվ 20 հասցեով:
2. Պարտավորեցնել համասեփականատերերին.
«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 08
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մայիսի 2012թվականի N 149-Ա

ԲՆԱԿԱՐԱՆԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Գառնիկ Սարգիսի Գրիգորյանը, իր ընտանիքի կողմից վարձակալական իրավունքով զբաղեցրած բնակարանը գնելու խնդրանքով: Հարցը քննարկվել է համայնքի ավագանու 2012թ. ապրիլի 28-ի նիստում և թիվ 62-Ա որոշմամբ բավարարվել:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոցի թիվ 5 շենքի թիվ 31, երկու սենյականոց՝ 67,22 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանն ուղղակի վաճառքի ձևով, 100830 (հարյուր հազար ութ հարյուր երեսուն) դրամ արժեքով, օտարել Գառնիկ Սարգիսի Գրիգորյանին, կնոջը՝ Անիկ Գրիգորյանին, աղջկան՝ Էլինար Գառնիկի Գրիգորյանին, որպես ընդհանուր համատեղ սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 10
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2012թվականի N 150-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՇԱՄԱԽՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 168 ՀԱՍՑԵՈՒՄ, ՔԱՂ. ԼԵՎՈՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. ապրիլի 6-ի թիվ 112 որոշմամբ օրինական է ճանաչվել համայնքի սեփականությունը հանդիսացող, Շամախյան փողոցի թիվ 168 հասցեի 1200.0քմ հողամասում, քաղ. Լևոն Մարտիրոսյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունը, մասնավորապես 35.0քմ անասնագոմը /հաշվարկված է արտաքին չափերով/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ավագանին 2012թ. ապրիլի 28-ի թիվ 63-Ա որոշմամբ համաձայնություն է տվել նշված շինությունը քաղ.Լևոն Մարտիրոսյանին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 12-րդ կետի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող, Շամախյան փողոցի թիվ 168 հասցեի 1200.0քմ հողամասը և ինքնակամ կառուցված շինությունը, մասնավորապես՝ 35.0քմ անասնագոմը, օտարել քաղ. Լևոն Մարտիրոսյանին, հետևյալ արժեքներով.
- անասնագոմ՝ 35.0 քմ – 91000 դրամ,
- հողամաս՝ 1200.0 քմ - 894240 դրամ:
2. Կնքել հողի և շինության առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Լևոն Մարտիրոսյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել 894240 դրամ, 900405051690 հաշվարկային հաշվին՝ 91000 դրամ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված հողամասի և

շինության նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 11
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2012թվականի N 151-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 14/10 ՀԱՍՑԵՈՒՄ, ՔԱՂ. ԿԱՌԼԵՆ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. ապրիլի 6-ի թիվ 111 որոշմամբ օրինական է ճանաչվել համայնքի սեփականությունը հանդիսացող, Շահումյան փողոցի թիվ 14/10 հասցեի 18.0քմ հողամասում, քաղ. Կառլեն Գալստյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունը, մասնավորապես՝ 18.0քմ մակերեսով մառանը /հաշվարկված է արտաքին չափերով/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ավագանին 2012թ. ապրիլի 28-ի թիվ 64-Ա որոշմամբ համաձայնություն է տվել նշված շինությունը քաղ.Կառլեն Գալստյանին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 12-րդ կետի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող, Շահումյան փողոցի թիվ 14/10 հասցեի 18.0քմ հողամասը և ինքնակամ կառուցված շինությունը, մասնավորապես՝ 18.0քմ մակերեսով մառանը օտարել քաղ. Կառլեն Գալստյանին, հետևյալ արժեքներով.
- մառան՝ 18.0 քմ – 46800 դրամ,
- հողամաս՝ 18.0 քմ - 22356 դրամ:
2. Կնքել հողի և շինության առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Կառլեն Գալստյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել 22356 դրամ, 900405051690 հաշվարկային հաշվին՝ 46800 դրամ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված հողամասի և

շինության նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 11
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2012թվականի N 152-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 181/2 ՀԱՍՑԵՈՒՄ, ՔԱՂ. ՀՐԱՀԱՏ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. ապրիլի 19-ի թիվ 127 որոշմամբ օրինական է ճանաչվել համայնքի սեփականությունը հանդիսացող, Կալինինի փողոցի թիվ 181/2 հասցեի 32.9քմ հողամասում, քաղ. Հրահատ Ստեփանյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունը, որը բաղկացած է 18.3քմ մակերեսով նկուղից, 32.9քմ ավտոտնակից /հաշվարկված է արտաքին չափերով/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ավագանին 2012թ. ապրիլի 28-ի թիվ 65-Ա որոշմամբ համաձայնություն է տվել նշված շինությունը քաղ.Հրահատ Ստեփանյանին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 12-րդ կետի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող, Կալինինի փողոցի թիվ 181/2 հասցեի 32.9քմ հողամասը և ինքնակամ կառուցված շինությունը, որը բաղկացած է 18.3քմ մակերեսով նկուղից, 32.9քմ ավտոտնակից, օտարել քաղ. Հրահատ Ստեփանյանին, հետևյալ արժեքներով.
- նկուղ՝ 18.3 քմ – 62220 դրամ,
- ավտոտնակ՝ 32.9 քմ - 55930 դրամ,
- հողամաս՝ 32.9 քմ - 62971 դրամ:
2. Կնքել հողի և շինության առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Հրահատ Ստեփանյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել 62971 դրամ, 900405051690 հաշվարկային հաշվին՝ 118150 դրամ, վերջիններիս մուծման անդորրագրերը

սույն որոշման անբաժանելի մասն են:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված հողամասի և շինության նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 11
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2012թվականի N 153-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 159-017 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 159-017 ծածկագրով 70.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում, մասնավորապես՝ այլ հողեր /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 159-017 ծածկագրով, 70.0քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Գետափնյա փողոց թիվ 3/7:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 159-017 ծածկագրով 70.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 11
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2012թվականի N 154-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 080-012 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 080-012 ծածկագրով 100.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում, մասնավորապես՝ այլ հողեր /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 080-012 ծածկագրով, 100.0քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Իվանովի փողոց թիվ 41/1:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 080-012 ծածկագրով 100.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 11
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2012թվականի N 155-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի 5 ամսվա գործունեության արդյունքները, անհրաժեշտություն է առաջացել վերանայել 2012թ. բյուջեի ծախսերի նախահաշիվներում որոշ հոդվածների տեղաշարժի և ֆինանսավորման ժամկետների հարցերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ.բյուջեով նախատեսված «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ»/բաժին 01 խումբ 06 դաս 01/հոդված 4241 ծախսերի նախահաշվից կատարել տեղաշարժ 557000 դրամ «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» /բաժին 01 խումբ 01 դաս 01/ հոդված 4222:
2. Հանձնարարել ֆինանսական բաժնի պետ Գ.Դավթյանին կազմել համապատասխան եկամուտների և ծախսերի նախահաշիվների փոփոխությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 11
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2012թվականի N 156-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 235/4 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂ. ՎԱՐԴԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. ապրիլի 4-ի թիվ 102 որոշմամբ Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Կալինինի փողոցի թիվ 235/4 հասցեի 21.3քմ հողամասում քաղ. Վարդան Հայկազի Թամրազյանի կողմից ինքնակամ կառուցված շինության, մասնավորապես, 21.3քմ մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականության իրավունքը /սեփ. վկայական՝ թիվ 08052012-11-0029/՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2005թ. հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 17-ի թիվ 731-Ն որոշման:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ վերոհիշյալ շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, համապատասխանում է գործող քաղաքաշինության կանոններին և սպասարկող հողամասը չի մտնում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված հողերի կազմում: Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, Կալինինի փողոցի թիվ 235/4 հասցեի ավտոտնակի օրինականացման վերաբերյալ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող Կալինինի փողոցի թիվ 235/4 հասցեի 21.3քմ հողամասում քաղ. Վարդան Թամրազյանի կողմից ինքնակամ կառուցված 21.3քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական /հաշվարկված է արտաքին չափերով/:

2. Գրավոր առաջարկություն ներկայացնել վերոհիշյալ ինքնակամ շինարարությունը իրականացրած քաղ. Վարդան Թամրազյանին Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի 35 կետով առաջադրված գներով, նշված հողամասի և ինքնակամ շինության ձեռք բերման նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 11
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2012թվականի N 157-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 241/3 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂ. ՍԵՂԱ ՊԱՊՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. ապրիլի 14-ի թիվ 118 որոշմամբ Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Կալինինի փողոցի թիվ 241/3 հասցեի 31.5քմ հողամասում քաղ. Սեղա Բաբկենի Պապյանի կողմից ինքնակամ կառուցված շինության, մասնավորապես, 31.5քմ նկուղով 31.5քմ մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականության իրավունքը /սեփ. վկայական՝ թիվ 02052012-11-0040/՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2005թ. հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 17-ի թիվ 731-Ն որոշման:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ վերոհիշյալ շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, համապատասխանում է գործող քաղաքաշինության կանոններին և սպասարկող հողամասը չի մտնում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված հողերի կազմում: Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, Կալինինի փողոցի թիվ 241/3 հասցեի նկուղով ավտոտնակի օրինականացման վերաբերյալ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող Կալինինի փողոցի թիվ 241/3 հասցեի 31.5քմ հողամասում քաղ. Սեղա Պապյանի կողմից ինքնակամ կառուցված 31.5քմ նկուղով 31.5քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական /հաշվարկված են արտաքին

չափերով/:
2. Գրավոր առաջարկություն ներկայացնել վերոհիշյալ ինքնակամ շինարարությունը իրականացրած քաղ. Սեղա Պապյանին Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի 35 կետով առաջադրված գներով, նշված հողամասի և ինքնակամ շինության ձեռք բերման նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 11
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2012թվականի N 158-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 1279.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 1279.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու վերաբերյալ՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտերով, մակերեսներով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գներով:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76 հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 13-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Կից աղյուսակում ներկայացված Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 1279.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու, ինչպես նաև հողամասերի կառուցապատման իրավունքի տարեկան վճարների մեկնարկային գները հաստատելու մասին հարցը ներկայացնել Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու քննարկմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 11
ք.Դիլիջան

Աղյուսակ.

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. մայիսի 11-ի թիվ 158-Ա որոշման

Դիլիջանի քաղաքային համայնքի Բնակավայրերի հողերի կառուցապատման իրավունքի մրցույթ

Հ/հ	Լոտ	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /քմ/	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը	Օգտագործման նպատակը	Հողամասի տրամադրման ժամկետը	Կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գին	Սահմանափակումներ
1	Լոտ 4/ՔԿ-12/	Սյասնիկյան 117/4	0227-0061	36.0	Բնակավայրերի հող	հասարակական կառուցապատման	հասարակական նշանակության օբյեկտի կառուցման	50 տարի	19800 դրամ	չկան
2	Լոտ 5/ՔԿ-12/	Թբիլիսյան խճուղի 14/3	0208-0005	1,243.0	Բնակավայրերի հող	հասարակական կառուցապատման	հասարակական նշանակության օբյեկտի կառուցման	50 տարի	43505 դրամ	չկան

Դիլիջանի համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար *Ա. Մարտիրոսյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2012թվականի N 159-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 2592.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 5 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 2592.0քմ ընդհանուր մակերեսով թվով 5 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու վերաբերյալ՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 13-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Կից աղյուսակում ներկայացված Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 2592.0քմ ընդհանուր մակերեսով թվով 5 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու և դրանց մեկնարկային գները հաստատելու մասին հարցը ներկայացնել Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու քննարկմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 11
ք.Դիլիջան

Աղյուսակ.

ՀՀ Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. մայիսի 11-ի թիվ 153 Ա որոշման

Դիլիջանի քաղաքային համայնքի Բնակավայրերի հողերի աճուրդ-վաճառք									
Հ/հ	Լոտ	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /քմ/	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը	Օգտագործման նպատակը	Մեկնարկային գին	Սահմանափակումներ
1	Լոտ 11/ՔՀ-12/	Կամո 167/2	0350-0069	30.0	Բնակավայրերի հող	բնակելի կառուցապատման	ավտոտնակի կառուցման	75,000	չկան
2	Լոտ 12/ՔՀ-12/	Սարի 21/1	0668-0002	1,856.0	Բնակավայրերի հող	բնակելի կառուցապատման	անհատական բնակելի տան կառուցման	4,640,000	չկան
5	Լոտ 13/ՔՀ-12/	Սարի 21/2	0669-0002	163.0	Բնակավայրերի հող	բնակելի կառուցապատման	անհատական բնակելի տան կառուցման	407,500	չկան
6	Լոտ 14/ՔՀ-12/	Այգեստան 17/3	0053-0408	50.0	Բնակավայրերի հող	հասարակական կառուցապատման	առևտրի սրահի կառուցման	125,000	չկան
3	Լոտ 15/ՔՀ-12/	Սարալանջի 9-րդ նրբ. 18	0053-0371	493.0	Բնակավայրերի հող	բնակելի կառուցապատման	անհատական բնակելի տան կառուցման	1,232,500	չկան

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար *Ա. Մարտիրոսյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մայիսի 2012թվականի N 160-Ա

ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ 3-ՐԴ ՆՐԲ. ԹԻՎ 17 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2012թ. ապրիլի 20-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Դիլիջանի Շահումյան փողոցի 3-րդ նրբանցք թիվ 17 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել քաղ. Գայանե Կամիսարի Բեգլարյանը: Վերջինս դիմել է քաղաքապետարան նշված տնամերձ հողամասի սահմանների ճշտման և հողամասին կից, իր կողմից փաստացի ավել օգտագործվող հողամասն իրեն օտարելու խնդրանքով:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովի ուսումնասիրություններից պարզվել է, որ Շահումյան փողոցի 3-րդ նրբանցք թիվ 17 հասցեի բնակելի տան տնամերձ հողամասի փաստացի չափը կազմում է 1373.0 քմ, որից 510.0քմ հողամասի նկատմամբ քաղ. Գայանե Բեգլարյանն ունի սեփականության իրավունք: Հանձնաժողովն առաջարկություն է ներկայացրել քաղաքապետին՝ փաստացի ավել օգտագործվող 863.0քմ-ից 102.0քմ-ի (510.0քմ X 20%) նկատմամբ ճանաչել քաղ. Գայանե Բեգլարյանի սեփականության իրավունքը, իսկ 761.0քմ (863.0քմ-102.0քմ) հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարել քաղաքացուն: Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառուցումներ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:
Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածազնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ բնակելի կառուցապատման, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75 հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման շրջանակներում Դիլիջանի Շահումյան փողոցի 3-րդ նրբ. թիվ 17 հասցեի 510.0քմ տնամերձ հողամասին կից փաստացի ավել օգտագործվող 863.0քմ հողամասից 102.0քմ հողամասի նկատմամբ ճանաչել քաղ. Գայանե Բեգլարյանի սեփականության իրավունքը, իսկ 761.0քմ հողամասն օտարել քաղաքացուն՝ ուղղակի վաճառքի ձևով: Օտարվող հողամասի արժեքը կազմում է 283549 դրամ:
2. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումները համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
3. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
4. Պարտավորեցնել քաղ. Գայանե Բեգլարյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել հողի արժեքը՝ 283549 դրամ /հաշվարկված է հողամասի կադաստրային արժեքի 30%-ի չափով/, վերջինիս մուծման անդորրագիրը սույն որոշման անբաժանելի մասն է:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 23
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մայիսի 2012թվականի N 161-Ա

ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱԹԱՐԲԵԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 25 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 62.0ՔՄ /ՄԻՆՉԵՎ 20%/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂ. ԺՈՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2012թ. ապրիլի 18-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի, Դիլիջանի Աթարբեկյան փողոցի թիվ 25 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել քաղ. Ժորա Գուրգենի Հարությունյանը: Վերջինս դիմել է Դիլիջանի քաղաքապետին՝ նշված տնամերձ հողամասի օրինական սահմանների ճշտման խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, Աթարբեկյան փողոցի թիվ 25 հասցեի տնամերձ հողամասի օրինական չափը կազմում է 1350.0քմ: Կատարված տեղազննման և քարտեզագրման արդյունքում պարզվել է, որ նշված տնամերձ հողամասին կից քաղաքացու կողմից փաստացի ավել օգտագործվում է 62.0քմ հողամաս, որի նկատմամբ ճանաչվում է քաղաքացու սեփականության իրավունքը (1350.0քմ X մինչև 20%) /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Վերջինիս տվյալները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի 1), 2), 3) ենթակետերի պահանջներին: Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան և օժանդակ շինության կցակառուցումներ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջան համայնքում իրականացվող առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման շրջանակներում Աթարբեկյան փողոցի թիվ 25 հասցեի տնամերձ հողամասին կից փաստացի ավել օգտագործվող 62.0քմ հողամասի նկատմամբ ճանաչել քաղ. Ժորա

Գուրգենի Հարությունյանի սեփականության իրավունքը: Այսպիսով, Աթարբեկյան փողոցի թիվ 25 հասցեի տնամերձ հողամասի չափը կազմում է 1412.0քմ /1350.0քմ+62.0քմ/մինչև 20%/:
2. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան և օժանդակ շինության ինքնակամ կցակառուցումները համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
3. Պարտավորեցնել քաղ. Ժորա Հարությունյանին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012թ. մայիսի 23
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մայիսի 2012թվականի N 162-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 11-003-258-026 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 11-003-258-026 ծածկագրով 20.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 11-003-258-026 ծածկագրով, 20.0քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Օրջոնիկիձե փողոց թիվ 67/4:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 11-003-258-026 ծածկագրով 20.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 23
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մայիսի 2012թվականի N 163-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 64 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Դոնարա Մուրադյանը՝ իր սեփականությունը հանդիսացող, Դիլիջանի Գետափնյա փողոցի թիվ 64 հասցեի տնամերձ հողամասից առանձնացվող 502.0քմ հողամասին նոր հասցե տրամադրելու խնդրանքով:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ համաձայն անշարժ գույքի սեփականության վկայականի, Գետափնյա 64 հասցեի տնամերձ հողամասի մակերեսը 1451.0քմ է: Պետականորեն լիցենզավորված անձի կողմից կատարված փաստացի չափագրման արդյունքում կազմված հողամասի հատակագծի համաձայն նշված տնամերձ հողամասի փաստացի չափը կազմում է 1363.0քմ:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Դոնարա Մուրադյանին պատկանող, Գետափնյա փողոցի թիվ 64 հասցեի տնամերձ հողամասից առանձնացվող 502.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Գետափնյա փողոց թիվ 64/1, մնացած 861.0քմ հողամասը թողնել նախկին՝ Գետափնյա փողոց թիվ 64 հասցեով:
2. Պարտավորեցնել քաղ. Դոնարա Մուրադյանին.
«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 24
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2012թվականի N 164-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԵՏԱՓՆՅԱ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ 2-ՐԴ ՀԱՐԿԻ 62,7ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԴԱՀԼԻՃԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ավագանին 2012թվականի մայիսի 23-ի թիվ 78-Ա որոշմամբ համաձայնություն է տվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Գետափնյա 5 հասցեում գտնվող մարզադպրոցի 2-րդ հարկի 62,7քմ մակերեսով դահլիճը 10 տարի ժամկետով, 40000 դրամ տարեկան վարձավճարով, Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության «Դիլիջանի արվեստի պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու մասին:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Գետափնյա 5 հասցեում գտնվող մարզադպրոցի 2-րդ հարկի 62,7քմ մակերեսով դահլիճը 10 տարի ժամկետով, 40000 դրամ տարեկան վարձավճարով տրամադրել Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության «Դիլիջանի արվեստի պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 25
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2012թվականի N 165-Ա

ՔԱՂ. ԾՈՎԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. ապրիլի 23-ի թիվ 129 որոշմամբ, 2012թ. մայիսի 25-ին կառուցապատման իրավունքի մրցույթի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 30.0քմ հողամաս /ԼՈՏ-2(ՔԿ-12), Շահումյան փողոց թիվ 8/1 /, 30 տարի ժամկետով, հասարակական սպասարկման օբյեկտի կառուցման նպատակով, 18000 դրամ տարեկան վճարի մեկնարկային գնով:
Կայացած մրցույթում 21600 դրամ տարեկան վճարի առավելագույն գնով հաղթեց Դիլիջանի Գայի փողոցի թիվ 32 տան բնակիչ Ծովիկ Մկրտչյանը, որի մասին մրցութային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 1 արձանագրությունը:
Նշված հողամասը գտնվում է «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ ընդհանուր օգտագործման հողեր:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76, 78, 80, 81 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի մրցութային հանձնաժողովի թիվ 1 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» /Շահումյան փողոցի թիվ 8/1 հասցեի/ 30.0քմ հողամասը 30 տարի ժամկետով, կառուցապատման իրավունքով տրամադրել քաղ. Ծովիկ Մկրտչյանին: Հողամասի տարեկան վճար սահմանել մրցույթում առաջարկված առավելագույն գինը, այն է՝ 21600 դրամ:
2. Կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Ծովիկ Մկրտչյանին.
1) Հողամասի կառուցապատումն իրականացնել Դիլիջանի քաղաքապետարանի կողմից տրված 23.04.2012թ. թիվ 2 (ՔԿ-12) ճարտարապետահատակագծային առաջադրանքի համաձայն:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2012թվականի N 166-Ա

ՔԱՂ. ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. ապրիլի 23-ի թիվ 130 որոշմամբ 2012թ. մայիսի 24-ին կրկնաճուրդի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 24.0քմ հողամաս /Լոտ-3(ՔՀ-12), Այգեստան փողոց թիվ 2/3 /, առևտրի տաղավարի կառուցման նպատակով, 60000 դրամ մեկնարկային գնով:
Կայացած աճուրդում 72000 դրամ առավելագույն գնով հաղթեց Դիլիջանի Այգեստան փողոցի թիվ 2բ շենքի բնակարան 5 հասցեի բնակիչ Արմեն Վարդանյանը, որի մասին աճուրդային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 5 արձանագրությունը:
Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ այլ հողեր, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67, 68 և 70 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 5 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերի» Այգեստան փողոց թիվ 2/3 հասցեի 24.0քմ մակերեսով հողամասը, առևտրի տաղավարի կառուցման նպատակով, օտարել Դիլիջանի Այգեստան փողոցի թիվ 2բ շենքի բնակարան 5 հասցեի բնակիչ Արմեն Վարդանյանին:
2. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Արմեն Վարդանյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել աճուրդի սակարկությունների արդյունքում ձևավորված առավելագույն գինը, այն է՝ 72000 դրամ, ընդ որում աճուրդի անցկացման օրը մուծված 3000 դրամ նախավճարը ներառվում է հողի օտարման

գնի մեջ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 29
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2012թվականի N 167-Ա

ՔԱՂ. ԿԱՐԻՆԵ ԱՆԱՆՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. ապրիլի 23-ի թիվ 130 որոշմամբ 2012թ. մայիսի 24-ին կրկնաճուրդի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 32.0քմ հողամաս /Լոտ-4(ՔՀ-12), Այգեստան փողոց թիվ 2/4 /, առևտրի տաղավարի կառուցման նպատակով, 80000 դրամ մեկնարկային գնով:
Կայացած աճուրդում 96000 դրամ առավելագույն գնով հաղթեց Դիլիջանի Այգեստան փողոցի թիվ 2բ շենքի բնակարան 5 հասցեի բնակիչ Կարինե Անանյանը, որի մասին աճուրդային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 6 արձանագրությունը:
Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ այլ հողեր, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67, 68 և 70 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 6 արձանագրությունը, Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերի» Այգեստան փողոց թիվ 2/4 հասցեի 32.0քմ մակերեսով հողամասը, առևտրի տաղավարի կառուցման նպատակով, օտարել Դիլիջանի Այգեստան փողոցի թիվ 2բ շենքի բնակարան 5 հասցեի բնակիչ Կարինե Անանյանին:
2. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Կարինե Անանյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել աճուրդի սակարկությունների արդյունքում ձևավորված առավելագույն գինը, այն է՝ 96000 դրամ, ընդ որում աճուրդի անցկացման օրը մուծված 4000 դրամ նախավճարը ներառվում է հողի օտարման

գնի մեջ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 29
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2012թվականի N 168-Ա

ՔԱՂ. ԿԱՐԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. ապրիլի 23-ի թիվ 130 որոշմամբ 2012թ. մայիսի 24-ին աճուրդի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 11.0քմ հողամաս /Լոտ-7(ՔՀ-12), Մյասնիկյան փողոց թիվ 60/2 /, առևտրի տաղավարի կառուցման նպատակով, 27500 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում 33000 դրամ առավելագույն գնով հաղթեց Դիլիջանի Գայի փողոցի 78շենքի բնակարան 6 հասցեի բնակիչ Կարեն Հովսեփյանը, որի մասին աճուրդային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 1 արձանագրությունը:
Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման իններորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ հասարակական կառուցապատման հողեր, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67, 68 և 70 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 1 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերի» Մյասնիկյան փողոց թիվ 60/2 հասցեի 11.0քմ մակերեսով հողամասը, առևտրի տաղավարի կառուցման նպատակով, օտարել Դիլիջանի Գայի փողոցի 78շենքի բնակարան 6 հասցեի բնակիչ Կարեն Հովսեփյանին:
2. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Կարեն Հովսեփյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել աճուրդի սակարկությունների արդյունքում ձևավորված առավելագույն գինը, այն է՝ 33000 դրամ, ընդ որում աճուրդի անցկացման օրը մուծված 1375 դրամ նախավճարը ներառվում է հողի օտարման

գնի մեջ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 29
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2012թվականի N 169-Ա

ՔԱՂ. ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. ապրիլի 23-ի թիվ 130 որոշմամբ 2012թ. մայիսի 24-ին աճուրդի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 108.0քմ հողամաս /Լոտ-8(ՔՀ-12), Շահումյան փողոց թիվ 34/1 /, առևտրի սրահի կառուցման նպատակով, 270000 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում 324000 դրամ առավելագույն գնով հաղթեց Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի 4-րդ նրբ. 44ա հասցեի բնակիչ Վարդան Վարդանյանը, որի մասին աճուրդային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 2 արձանագրությունը:
Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ հասարակական կառուցապատման հողեր, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67, 68 և 70 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերի» Շահումյան փողոց թիվ 34/1 հասցեի 108.0քմ մակերեսով հողամասը, առևտրի սրահի կառուցման նպատակով, օտարել Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի 4-րդ նրբ. 44ա հասցեի բնակիչ Վարդան Վարդանյանին:
2. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Վարդան Վարդանյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել աճուրդի սակարկությունների արդյունքում ձևավորված առավելագույն գինը, այն է՝ 324000 դրամ, ընդ որում աճուրդի անցկացման օրը մուծված 13500 դրամ նախավճարը ներառվում է հողի

օտարման գնի մեջ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:

2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 29
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2012թվականի N 170-Ա

ՔԱՂ. ԱՍՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. ապրիլի 23-ի թիվ 130 որոշմամբ 2012թ. մայիսի 24-ին աճուրդի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 20.0քմ հողամաս /Լոտ-9(ՔՀ-12), Բարեկամության փողոց թիվ 1/3 /, ավտոտնակի կառուցման նպատակով, 50000 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում 60000 դրամ առավելագույն գնով հաղթեց Դիլիջանի Բարեկամության փողոցի թիվ 1շենքի բնակարան 4 հասցեի բնակիչ Ասյա Գասպարյանը, որի մասին աճուրդային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 3 արձանագրությունը:
Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ հասարակական կառուցապատման հողեր, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67, 68 և 70 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերի» Բարեկամության փողոց թիվ 1/3 հասցեի 20.0քմ մակերեսով հողամասը, ավտոտնակի կառուցման նպատակով, օտարել Դիլիջանի Բարեկամության փողոցի թիվ 1շենքի բնակարան 4 հասցեի բնակիչ Ասյա Գասպարյանին:
2. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Ասյա Գասպարյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել աճուրդի սակարկությունների արդյունքում ձևավորված առավելագույն գինը, այն է՝ 60000 դրամ, ընդ որում աճուրդի անցկացման օրը մուծված 2500 դրամ նախավճարը ներառվում է հողի օտարման

գնի մեջ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 29
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2012թվականի N 171-Ա

ՔԱՂ. ՀՈՎԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. ապրիլի 23-ի թիվ 130 որոշմամբ 2012թ. մայիսի 24-ին աճուրդի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 24.0քմ հողամաս /Լոտ-10(ՔՀ-12), Բարեկամության փողոց թիվ 1/4 /, ավտոտնակի կառուցման նպատակով, 60000 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում 72000 դրամ առավելագույն գնով հաղթեց Դիլիջանի Բարեկամության փողոցի թիվ 1շենքի բնակարան 5 հասցեի բնակիչ Հովիկ Մարտիրոսյանը, որի մասին աճուրդային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 4 արձանագրությունը:
Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ հասարակական կառուցապատման հողեր, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67, 68 և 70 հոդվածների պահանջները և ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 4 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերի» Բարեկամության փողոց թիվ 1/4 հասցեի 24.0քմ մակերեսով հողամասը, ավտոտնակի կառուցման նպատակով, օտարել Դիլիջանի Բարեկամության փողոցի թիվ 1շենքի բնակարան 5 հասցեի բնակիչ Հովիկ Մարտիրոսյանին:
2. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Հովիկ Մարտիրոսյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել աճուրդի սակարկությունների արդյունքում ձևավորված առավելագույն գինը, այն է՝ 72000 դրամ, ընդ որում աճուրդի անցկացման օրը մուծված 3000 դրամ նախավճարը ներառվում է հողի օտարման

գնի մեջ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 29
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2012թվականի N 172-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 675-002 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 675-002 ծածկագրով հողամասի մի մասի՝ 1741.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը՝ վերջինս ընդգրկելով Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի կազմում: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 հուլիսի 21-ի թվականի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 675-002 ծածկագրով հողամասի մի մասին՝ 1741.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Պարզ լճի փողոց թիվ 69:
2. Նշված 1741.0քմ հողամասն ընդգրկել Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի ֆոնդում:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 675-002 ծածկագրով հողամասի մի մասի՝ 1741.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 29
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2012թվականի N 173-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 245-026 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 245-026 ծածկագրով հողամասի մի մասի՝ 31.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը՝ վերջինս ընդգրկելով Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի կազմում: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 հուլիսի 21-ի թվականի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 245-026 ծածկագրով հողամասի մի մասին՝ 31.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Գայի փողոց թիվ 80/6:
2. Նշված 31.0քմ հողամասն ընդգրկել Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի ֆոնդում:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 245-026 ծածկագրով հողամասի մի մասի՝ 31.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 29
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2012թվականի N 174-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 274-040 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 274-040 ծածկագրով հողամասի մի մասի՝ 13.7քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը՝ վերջինս ընդգրկելով Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի կազմում: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 հուլիսի 21-ի թվականի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 274-040 ծածկագրով հողամասի մի մասին՝ 13.7քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Մյասնիկյան փողոց թիվ 60/3:
2. Նշված 13.7քմ հողամասն ընդգրկել Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի ֆոնդում:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի ապասարկման գրասենյակ, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 274-040 ծածկագրով հողամասի մի մասի՝ 13.7քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 29
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2012թվականի N 175-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի 5 ամսվա գործունեության արդյունքները, անհրաժեշտություն է առաջացել վերանայել 2012թ. բյուջեի ծախսերի նախահաշիվներում որոշ հոդվածների տեղաշարժի և ֆինանսավորման ժամկետների հարցերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ.բյուջեով նախատեսված «Նախադպրոցական կրթություն» /բաժին 09 խումբ 01 դաս 01/ հոդված 5113 ծախսերի նախահաշվից կատարել տեղաշարժ 14000000 դրամ «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 4, խումբ 5, դաս 1, հոդված 5113/:
2. Հանձնարարել ֆինանսական բաժնի պետ Գ.Դավթյանին կազմել համապատասխան եկամուտների և ծախսերի նախահաշիվների փոփոխությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. մայիսի 29
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2012թվականի N 176-Ա

ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՄՈ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 139 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2012թ. մայիսի 17-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի՝ Դիլիջանի Կամո փողոցի թիվ 139 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք են բերել քաղաքացիներ Համլետ Մարկոսյանը, Սուսաննա Գալուստյանը, Դավիթ Մարկոսյանը, Հրանտ Մարկոսյանը, Արթուր Մարկոսյանը և Հարություն Մարկոսյանը: Վերջիններս դիմել են Դիլիջանի քաղաքապետին նշված հասցեի տնամերձ հողամասի սահմանների ճշտման և հողամասին կից փաստացի ավել օգտագործվող հողամասն իրենց օտարելու խնդրանքով:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, Կամո փողոցի թիվ 139 հասցեի բնակելի տան տնամերձ հողամասը բաղկացած է երկու գույքային միավորներից, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 600.0 քմ /520.0քմ և 80.0քմ/: Կատարված տեղազննման և քարտեզագրման արդյունքում պարզվել է, որ նշված տնամերձ հողամասի փաստացի չափը կազմում է 1937.0քմ, որը բաղկացած է երկու գույքային միավորներից՝ 1600.0քմ և 337.0քմ մակերեսներով: Հանձնաժողովն առաջարկություն է ներկայացրել քաղաքապետին՝ նշված 1600.0քմ հողամասի կազմում փաստացի ավել օգտագործվող 1080.0քմ-ից 104.0քմ-ի (520.0քմ X 20%) և 337.0քմ-ի կազմում փաստացի ավել օգտագործվող 257.0քմ-ից 16.0քմ-ի (80.0քմ X 20%) նկատմամբ ճանաչել քաղաքացիների սեփականության իրավունքը, իսկ մնացած 976.0քմ (1080.0քմ-104.0քմ) հողամասը, որը բաղկացած է 253.0քմ և 723.0քմ մակերեսներով հողամասերից, և 241.0քմ (257.0քմ-16.0քմ) հողամասերը ուղղակի վաճառքի ձևով օտարել քաղաքացիներին /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված տնամերձ հողամասում առկա են բնակելի տան ինքնակամ կցակառուցումներ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:
Նշված հողամասերը չեն հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հող, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում են բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ բնակելի կառուցապատման, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի: